

ՄԱԳ. Աստուածք, ձեր հովանի շարժեսցի առ
գերեզմարձն իմ։
ԱՏ. Ամենայն երակունք իմ ցան դողութեամբ։
ՄԱԳ. Մի վեհեացուք, ով Աստախիլէ։ Պայծա-
ռագոյն են այժմ երկինք քան յառաջն. նշողէ
ինչ յուսոյ ճառագայթ։
ԱՏ. ԱՇ. Մագոն, ճշմարիտ է. այլ չառայ ինձ զ-
րութիւն։ Իմ յոյս ոչ ճառանչ է արփաւոր
երկնի, այլ ափուոր ճառագայթ պատոր փայլա-
կան։ Ճառագայթ որ ՚ի հեռուստ ընդ երկեխն և
ծածկի. զվարան մերկանայ, այլ աւազ զի ոչ
փարատէ։ (Եւնէ)։

ՏԵՍԻԼԻ

ՄԱԳՈՆ

Արծարծանել ճնարիմ զթառամեալ սիրոն Աս-
տիզեայ. յարիութիւն իրատեմ, և ես ինքն առ-
սանիմ։ Մինչդեռ սակաւ էր յօյս՝ առաւել էր
արփութիւն։ Անսաոյգ եեթ երկիւզ տագնա-
պէր զիս յայնժամ սպառանացեալ չարի. իսկ
արդ երկնչեմ զկորսաւենէ հաւասարի բարւոյն։
Որ զյեղյեղուկ ափս ակօսէ, կուր լինել անդըն-
դոց նենգաւոր տարերն յաւս իւր զնէ։ Սակայն
առ նաւահանգստին երթեալ սուզանիլ անհնա-
րին է բազդ գժոխըմբէր։

Իր շարամնակուի։

ՀԵՏԱՔՐՅՐԱԿԱՆՔ

ՀԱԿԱՆԱՍԱԿ ՏԱՐՔ յԱՐԱՐԱՂԻԱ.

Աւստրալիոյ նոր զարմանալեաց աշ-
խարհին շատ նշանաւոր բաներուն մէջ՝
մէկն ալ իր մեծամեծ կամ բարձր բարձր
ծառերն են. որք և աւելի զարմանալի
կ'երեան երկրին կենդանեաց պղտիկու-
թեան համեմատելով։ Ամենէն բարձր
տեսակ ծառն է քարրի ըստածն, և

ըստ բուսաբանից *Eucalyptus colossea*.
Ուորրըն (Warren) գետոյն եղելքը խո-
րածորի մը մէջ այս ծառէն հատ մը կայ
400 անգղիացի ոտք բարձր, որուն կոճ-
դը երկու կողմէն քարտորի պէս բա-
ցուած է, մինչն երկք ձիաւոր իրենց
կազմածով կամ բեռներով՝ քովէ քով
կ'անցնին հանդիստ և համարձակ։ Մէկ
հատ մ'ալ զետինն ընկած կար 420' եր-
կայն. ուրիշ մը Պէտք Սփըր ըստած տե-
ղը՝ ինչուան 480 ոտնաչափ գտնուեցաւ.
իսկ հաստութիւն ծառոյն՝ զետնէն ե-
րեկ կամ չորս ոտք վեր 40էն ինչուան
80 ոտք շրջապատով գտնուած է։ Ետրա-
և լաղրոպ զետոց ափունքն ալ ինչուան
500 ոտք բարձրութեամբ ծառեր տես-
նուած են. որք ոչ միայն ամենէն բարձր
զանգակաց աշտարակներէ, այլև Եղիպ-
տոսի մեծագոյն բուրդերէն ալ աւելի
բարձր են, և անշուշտ ինչուան հիմայ
տեսնուածներէն աւելի բարձրեր ալ
պիտի գտուին։

Ասոնցմէ առաջ ճանչցուած ամենէն
բարձր ծառն էր Ամերիկայի Գալիֆոռ-
նիոյ Սեզորոյա (Sequoia Wellingtonia)
ըստածն, 450 ոտք. այս տեսակս աւե-
լի հաստ կամ լայնարոլը կ'ըլլայ քան
Աւստրալիոյ ծառերը։

Գուցէ ըստ զիպաց՝ բայց զիտելի կըր-
նայ ըլլալ, որ այս երկու երկիրներն ալ
(Աւստրալիա և Գոլիֆոռնիա) այս ետ-
քի տարիներս անուանի եղած են իրենց
առատ ոսկեհանգը. ուր հարստանա-
լու համար խուռն զիմոզք՝ եթէ չզար-
մանան այսպիսի բուսական հրաշալեաց
վրայ, գուցէ այն հին և հսկահասակ
ծառերն զարմանան անոնց վրայ։

ՎԵՆԵՑԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ԴԱԶԱՐՈՒ